ԴՐՕՇԱԿ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Սեպտեմբեր· 91Թ·

Ամեն մի քաղաքական կուսակցութիւն՝ դաղափարի համար կռիւ սկսելով կարող է յաջողութեան կամ անյաջողութեան յոյս ունենալ միայն այն ժամանակ, երբ կան հետեւեալ երկու անհրաժեշտ պայմանները·

1) ԵԹԷ ժողովուրդը, որի շահերի համար մղւում է կռիւը, հասկանում է այդ կռուի անհրաժեշտ լինելը եւ մասնակցում է այդ կռուին թէ ուղղակի եւ թէ անուղղակի կերպով՝ դոնէ ի դէմս իւր ամենալաւ ներկայացուցիչների·

2) ԵԹԷ կռուի համար ընտրուած են այնպիսի նպատակայարմար ձեւեր եւ միջոցներ, որոնք բոլորովին համապատասխան են ներկայ իրականութեան եւ պատմական րոպէի պահանջած պայմաններին·

Առաջին պայմանը, բարեբաղդաբար, մեզնում կայ· Հայ ժողովուրդն արդէն ապացուցեց, որ հասկանում է տաճկական անարդ լծից ազատուելու անհրաժեշտութիւնը, թէեւ դրա համար պէտք լինի զոհել նոյն իսկ իւր ստացուածքն ու կեանքը· Հայ ժողովուրդն այդ ապացուցեց մասսային ցոյցերով Կաքինում ու Զօլսում եւ մի շարք անհատական ու խմբովին յեղափոխական ձեռնարկութիւններով·

Ուրեմն ասել թէ հայ ժողովուրդը գիտակցօրէն ըմբռնել է արդէն կռուի անհրաժեշտութիւնը՝ դեռ քիչ է· Նա ոչ միայն հասկանում է այդ, այլեւ մինչեւ անգամ իւր այդ գիտակցութեամբ առաջ է հայ ինտելիգէնցիայից· Իսկապէս ասած՝ ինտելիգէնցիան միայն արձագանք տուեց ժողովրդի պատերազմական կոչին, որ լսուեց անակնկալ կերպով· Այն՝ ինչ որ սպասում էին ապագայում, թէեւ մօտ ապագայում, կատարուեց այսօր, եւ այն էլ այնպիսի ազդու ձեւով, որ վերջ տրուեց բոլոր կասկածներին, եւ մինչեւ անգամ ամենաթերահաւատներն իսկ համոզուեցին, որ վիճակ դցուած է, Ռուբիկոնն անցկացած,—որ հայկական յեղափոխութիւն սկսուած է·

Ի՞նչ պէտք է անէր այն ինտելիգէնցիան, որ ճանաչում է իւր պատմական կոչումը՝—ծառայել ժողովրդի—աշխատաւոր մասսայի շահերին· Նա պէտք է շտապէր ժողովրդի կոչին, նա պէտք է դնար իւր գիտութեան պաշարով աջակցելու ժողովրդին այդ դժուար րոպէում եւ կազմակերպելու այն կռիւը, որ սկսում էր ժողովուրդը դարաւոր ճնշման ու անարդարութեան դէմ· Եւ ինտելիգէնցիան յետ չմնաց ժողովրդից, հեհեւեց նրան·

Այդ հանգամանքը նոր շարժման ամենաքնորոշ եւ խորհրդաւոր կողմն է, նրա յարատեւութեան եւ յաջողութեան ամենամեծ գրաւականն է·

«Բազում քն կոչեցեալք, բայց սակաւք ընտրեալք»·

Իրաւ է, բոլոր ինտելիգէնտ գործիչները մինչեւ վերջը չեն հասցնիլ գործը, շատերը գուցէ կանգ կ'առնեն կէս ճանապարհին, կամ հէնց ճանապարհի սկզբին,—բայց այդ ոչինչ· այն ժողովուրդը, որ հասել է կռուի անհրաժեշտութեան գիտակցութեանը եւ կարողացել է իւր վրայ առնել այդ կռուի՝ որքան ծանր, եւ նոյնքան փայլուն նախաձեռնութիւնը, կը կարողանայ իւր միջից դուրս բերել իրար յետեւից նորանոր ինտելիգէնտ ոյժեր, որոնք ընդունակ կը լինին վճռել յեղափոխական շրջանի (էպօխա) խնդիրները·

Անցնենք երկրորդ պայմանին·

Ամենից առաջ պէտք է ի նկատի ունենալ, որ մեր կռիւը՝ ժողովրդի կռիւ է նրա դարաւոր բռնակալների դէմ· Իբրեւ ժողովրդական կռիւ, նա չի կարող կանոնաւոր զօրքերի վարած պատերազմի ձեւ ունենալ· ի հարկէ եԹԷ մի արտակարգ դէպք չպատահի· Մտախաբութիւն է երեւակայել թէ Տաճկա- Հայաստանում կամ նրա սահմաններում կարելի է պատրաստել ու կազմակերպել մարտնչող դնդեր, նոյն իսկ ամբողջ զօրք, որ մի օր յառաջ կը խաղայ վճռական ճակատամարտ տալու, եւ այդպիսով կը սկսի եւ կը վերջացնի հայրենիքի ազատութեան գործը·

Ո՛չ, հայ ժողովրդի կռիւը պէտք է պարտիզանական կռիւ լինի· մենք մեր այժմեան դրութեան մէջ ուրիշ կերպ կռուել չենք կարող· կանոնաւոր պատերազմ, իսկական ճակատամարտներ անհնար են մեզ համար·

Այդ է թելադրում մեզ առողջ դատողութիւնը եւ այդ է սովորեցնում մեզ նոյն իսկ ուրիշ ազգերի—Բուլղարների, Իտալացիների, Ցոյների պատմական օրինակը: Այդպէս պէտք է կռուենք եւ մենք դոնէ մինչեւ այն ժամանակ, երբ պարտիզանական կռուի ջոկ-ջոկ ալիքները միախառնուելով կը կազմեն ժողովրդական ապստամբութեան յորդահոս հեղեղը, որ կը սրբի կը տանի իւր հետ Հայաստանի երեսից ստրկութեան, աղքատութեան, անարդարութեան դարաւոր կնիքը...:

Այդ պարտիզանական պատերազմի նախաձեռնողները կը լինին ժողովրդից դուրս եկած մարտնչող մարդիկ, որոնք միայն ձեւ են փնտրում արտայայտելու իրանց հրաշալի զգացմունքները, ոյժերն ու ընդունակութիւնները:

Այդ ձեւը—հրոսակային (հայդուկային, աւազակային) խմբերի կռիւը—կը թելադրեն ժողովրդին եւ կը-ժողովրդականացնեն՝ յեղափոխական ինտելլիգէնցիայի ներկայացուցիչները:

Շատ մեծ դեր են խաղացել հրոսակային խմբերն այս դարում ազատուած մանր ազգութիւնների պատմութեան մէջ. այդպիսի մեծ դեր կարող են եւ պէտք է խաղան նրանք նաեւ մեզ համար: Ախոյեան հանդիսանալով ամէն տեսակ բռնաւորների դէմ՝ սկսած սատրապ աստիճանաւորից մինչեւ քիւրդ աւազակը մի կողմից եւ արիւնարբու հարկահանի ու վաշխառուի դէմ միւս կողմից, այդ խմբերը՝ ապագայ պատմութեան կենդանի դրօշակներ կը լինին: Պարտիզանական յարձակումներ գործելով բռնաւորների վրայ, պաշտպանելով ճնշուածներին, նրանք կ'ելէքտրականացնեն ժողովրդի միտքն ու զգացմունքը, կռուի կենդանի օրինակներ կը տան ժողովրդին եւ այդպէս մասամբ գաղափարական կերպով, մասամբ իրականապէս կը ժողվեն իրանց շուրջը եւ կը կազմակերպեն կռուելու փոքրիշատէ ընդունակ բոլոր տարրերը:

Այդ ոյժերը կանոնաւոր կերպով կազմակերպելու եւ ամբողջ Հայաստանում այդ խմբերի միջեւ մի ընդհանուր կապ հաստատելու համար օգնութեան կը հասնի ինտելլիգէնցիան, որ գլխաւորապէս պէտք է զբաղուի հէնց յեղափոխական ոյժերի կազմակերպութեամբ: Ապստամբութեան գաղափարը քարոզելու նա պէտք չի ունենալ: Տաճկաստանի այժմեան կառավարութեան ձեւը ամենալաւ քարոզիչն է այդ գաղափարի: Ինտելլիգէնցիան միայն պէտք է որոշի յեղափոխական դրական իդէալները եւ կազմակերպի եղած յեղափոխական ոյժերը:

Եւ այդ կազմակերպութիւնը գլուխ գայ, այնուհետեւ կը հեշտանայ ժողովրդին դէնք մատակարարելը եւ ինքնիրան կը վճռուի թէ ընթացիկ կռուի եւ թէ ապստամբական շրջանի բոլոր միջոցների հարցը:

Իսկ այդպիսի միջոցներ փնտռելու կարեւորութիւն չկայ—յեղափոխական տեխնիկայի մէջ այդ հարցը վաղուց վճռուած է: Մենք անյարմար ենք համարում կանգ առնել այդ հարցի վրայ:

Յեղափոխական հարուստ տեխնիկայով՝ զինուած գաղտնի կազմակերպութեան տարածումն ու զարգացումը բնականաբար առաջ կը բերի աւելի յաճախ կը-կնուող խմբային ցոյցեր տաճկական բռնակալութեան դէմ, որոնք մի կողմից կը դաստիարակեն ժողովրդի յեղափոխական ոգին, միւս կողմից կը քայքայեն Տաճկաց տէրութեան՝ առանց այն էլ խախուտ կազմը:

Եւ երբոր յեղափոխութեան պարտիզանական կռուի ալիքները կ'ողողեն ամբողջ Տաճկական—Հայաստանը, երբոր նրանք անվերանորոգելի ճեղքեր կը բանան Տաճիկ տէրութեան խախուտ շինուածքի մէջ, երբոր վերջապէս Եւրոպան կը տեսնի, որ Տաճկաստանի խաղաղութիւնն անդառնալի կերպով խռովուած է երկու անհաշտ՝ մինչ արեան վերջին կաթիլը մաքառիլ վճռած թշնամիների կողմից, երբոր նա կը տեսնի, որ Տաճկաստանում իւր դործ դրած դրամագլուխները վը-նասվում են եւ կորչելու վտանգի են ենթարկվում եւ որ կայծը բոցավառուելով կարող է եւրոպական զարհուրելի հրդեհի պատճառ դառնալ,—այն ժամանակ կը դայ վճռական րոպէն եւ ամբողջ ժողովուրդը իբրեւ մի մարդ, մի հոգի ոտի կը կանգնի եւ զէնքի ոյժով ձեռք կը բերի իւր մարդկային իրաւունքները, այն իրաւունքները, որ այսքան դար-անխիղճ կերպով ոտնակոխ են արել տաճիկներն ու քրդերը:

Տաճիկ կառավարութիւնը չի կարողանալ խեղդել յեղափոխութիւնը ո՛չ նրա առաջին շրջանում, ո՛չ էլ վերջինում: Ապակեդրոնացման, (դեցենտրալիզացիա) ու տեղական ինքուրոյն նախաձեռնութեան վրայ հիմնուած յեղափոխական կազմակերպութիւնը՝ իբրեւ հարիւր գլխանի վիշապ կը գործի ամեն տեղ եւ ամեն տեսակ ձեւերով ու հնարքներով: Նա կը մոցնի իւր աւերիչ զէնքը թէ քաղաք եւ թէ դիւղ, թէ կաշառակեր աստիճանաւորների եւ թէ արիւնարբու վաշխառուների շրջանը, մի խօսքով նա սրով ու հրով կը ջնջի ժողովրդի բոլոր թշնամիներին ու բռնակալներին: Ի հարկէ արիւնահեղ փորձեր եւս կը լինին յեղափոխական վիշապին սպանելու, բայց իզուր—մի կտրուած գլխի տեղ կը բուսնեն հարիւրաւոր գլուխներ, մի կալանաւորուած ու ջարդուած խմբի տեղ՝ յարութիւն առած ու ինքնագործունեայ ժողովուրդն պառաջ կը բերի հարիւրաւոր նոր խմբեր: Շատ արիւն կը թափուի, շատ աչքեր կ'արտասուեն, բայց մի՞թէ այժմ արիւնը արտա-

տուք են ողողում Հայաստանի հովիտները, եւ վերջապէս ի՞նչ արած որ այժմեան մարդկութիւնն առանց արիւնային վարձատրութիւն ստանալու ազատութիւն չի տալիս ոչ ոքի: Եւ մեր ժողովուրդը կը վճարի այդ վարձը, այդ պարտքը՝ ոգեւորուած այն մտքով, որ վիճակն արդէն գցուած է եւ յաղթութիւնը իւրն է լինելու, եւ միայն իւրը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Դրօշակ»-ի անցեալ համարում մենք գրել էինք, որ մեր այժմեան պահանջները մօտաւորապէս նոյն են, ինչ որ յայտնուած են Ներսէս Պատրիարքի ծրագրում:

Որովհետեւ այդ խօսքերը տեղիք են տուել թիւրիմացութեան, մենք կարեւոր ենք համարում յայտնել, որ մենք այդ գրելով աչքի առաջ ենք ունեցել այն դէպքը, եթէ Սուլթանը իւր բարի կամքով մտցնի Տաճկական-Հայաստանում Ներսէս պատրիարքի ծրագրում պահանջուած բարենորոգութիւնները, որ շատ անհաւանական է: Սուլթանը իւր վարմունքով օրէցօր աւելի է համոզում ամենքին, որ Տաճկական-Հայաստանի համար ապստամբութիւնից դուրս փրկութիւն չկայ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տաճկահայերի տրամադրութիւնը.

Յեղափոխական գործի համար ամենաառաջնակարգ նշանակութիւն ունեցող հարցն այն է, թէ ի՞նչպէս է վերաբերվում ժողովուրդը դէպի յեղափոխական գործը: Եթէ մի երկրում գոյութիւն ունի յեղափոխութեան բոլոր միւս պայմանները, բայց բացակայում է ժողովրդի բարեյաջող տրամադրութիւնը, եթէ մի տեղ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը, չեմ ասում թշնամաբար, անտարբեր է վերաբերվում դէպի յեղափոխական գործը, այնտեղ միքանի սերունդ գործիչների անընդհատ աշխատանք է պահանջվում նպաստաւոր տրամադրութիւն ստեղծելու համար: Բարեբաղդաբար այսօրուայ հայ յեղափոխական գործիչն ազատուած է այդ նախապատրաստուած գործունէութիւնից. մեր վերջին տասը-քսան տարուայ պատմութիւնը, տաճկական իշխանութեան անտանելի պայմաններն այսօր առաջ են բերել մի յեղափոխական ազգաբնակութիւն, որ միայն աջող հանգամանքի է սպասում թօթափելու իրանից տաճկական լուծը:

Այսպէս կարծելու մեզ իրաւունք են տալիս Տաճկական-Հայաստանից հասած բազմաթիւ տեղեկութիւնները, այդպիսի տպաւորութիւն դուրս են բերել եւ մեր գործակալները, շփուելով տեղական ժողովրդի հետ:

Այստեղ առաջ ենք բերում մեր գործակալներից մէկի հաղորդածը: «Դաշնակցութիւնը» նրան մի ուրիշ յանձնարարութիւն էր տուել, որին գլուխ բերելու համար, հարկաւոր էր մի քանի մարդկանց աջակցութիւն: Կազմուեց մի խումբ: Խումբը՝ բաղկացած եօթ զինուած մարդուց, անցաւ սահմանը. հարկաւոր էր անցնել թշնամիների միջով. սահմանի վրայ նրանց սպասում էր սահմանապահ զօրքը, երկրի խորքերում էլ զափթիէները եւ, որ ամենագլխաւորն է, մահմեդական կատաղած ազգաբնակութիւնը, եւ այս բոլորի միջով պէտք է անցնէին եօթ զինուած հայեր. մարդիկ, որոնք շատ քիչ էին ծանօթ երկրին եւ տեղական հանգամանքներին, եւ ի՞նչ էք կարծում. ամբողջ մի ամիս ու կէս խումբը մնաց այդ երկրում, անցաւ ահագին տարածութիւն, անցաւ տասնեակ գիւղեր, պատահեց հազարաւոր մարդկանց եւ ամբողջ ժամանակ համարեա ո՛չ մի մատնութիւն, ո՛չ մի վատութիւն չեղաւ հայերի կողմից. խումբը կատարեց իւր վրայ դրած յանձնարարութիւնն առանց փորձանքի ու անվտանգ հասաւ իւր տեղը: Դա կարելի՞ բանէր, եթէ նրանց նպաստած չլինէր տեղական հայ ազգաբնակութիւնը. եւ իրօք առանց հայերի աջակցութեան մեր մարդիկը մի քայլ անգամ անկարող էին անել իրանց համար մի անծանօթ երկրում: Մերոնց ընդունում էին իրանց տներն առանց տարակուսանքի ու կասկածի, պահում պատսպարում էին, ճիգ էին թափում նրանց ամեն մի յարմարութիւն տալու, առաջնորդում էին գիւղից գիւղ (ի հարկէ առանց վարձատրութեան). եւ գիտէ՞ք ինչ քայլ էր նրանց արածը. այդ այն քայլերիցն է, որի համար մարդկանց կիզիչ Արաբիայի խորքերն են տանում: Մեր մարդկերանց գնալուց մի ամիս առաջ Տաճիկ կառավարութիւնը սաստիկ սպառնացել էր այն ամեն մէկին, որ ապաստարան կամ որեւիցէ դիւրութիւն կը տայ «Ընկերութեան» մարդկանց, եւ այդ մտքով ստորագրութիւն էր վերցրել գիւղի իշխաններից:

Մտնենք մի քանի մանրամասնութիւնների մէջ:

Մեր մարդիկ, իջնելով մի որեւէ գիւղացու մօտ, պատուիրում էին նրան ծածուկ պահել միւսներից: Այդ երբեմն, թէեւ քիչ անգամ, յաջողվում էր նրանց: Այսպէս պատահեց եւ գիւղում: Մերոնք գիշերեցին մէկի մօտ եւ դուրս եկան գիւղից չնկատուած ոչ ոքից: Վերադարձին մեր մարդիկ անցան նոյն գիւղով եւ մնացին նոյն մարդու մօտ: Տանտէրը պատմել էր, թէ նրանց հեռանալուց յետոյ գիւղումն իմացել էին եւ գիւղացիք սաստիկ անբաւական էին մնացել իրանից, ասելով. «ինչ է, մենք անօրէն ենք, քիւրդ ու տաճի՞կ ենք, որ մեզնից կը ծածկէիր, կամ քեզնից վա՞տ հայ ենք»:

Յաճախ բանն իսկոյն բացվում էր եւ այն ժամանակ մեր ընկերների իջած տեղն աւելի մի ուխտատեղի էր նըմանում. մէկը մտնում էր, միւսը դուրս գալիս եւ այսպէս շարունակ. մերոնցից մէկը մի գիւղում հետեւեալ դէպքին է ականատես եղել, մէկն՝ իմանալով մերոնց գալուստը, ընկել է գիւղը գոռալով՝ «տղե՛րք դուրս եկէք. Ա—ենց տունը երկնքից լոյս է իջել»:

Գալիս են հաւաքվում և սկսվում է խօսակցութիւն: Խօսակցութեան ամենաառաջին եւ ամէն տեղ կրկնուող նիւթն է. «ի՞նչ կ'ընէ, ի՞նչ կը խորհէ մեր մասին «Ընկերութիւնը». ի՞նչու չի գար մեզի օգնելու. չգիտէ՞ նա մեր սեւ օրը, չգիտէ՞ մեր ցաւը», եւ սկսվում են գանգատներ, անվերջ գանգատներ իրանց դրութեան վերաբերմամբ տաճիկ ու քրդի ձեռքից: Եւ ի՞նչպէս չը գանգատուեն. չկայ մէկը, որի զգացմունքները խորը կերպով վիրաւորուած չլինէին այդ բարբարոսներից. Ամենամեծ տպաւորութիւն է թողել մերոնց վրայ մի գիւղացի: «Տեսնո՞ւմ էք այս մատները, ասել է նա, հանելով ծոցի քսակից մի քանի չորցած մատներ. սրանք իմ եղբօր մատներն են, որին քրդերն իմ աչքի առաջ մորթեցին եւ ես չեմ հանգստանալ, մինչեւ չթափեմ թշնամիներիս արիւնը. ես այդ ուխտել եմ եւ այս մատները պիտի ամէն օր յիշեցնեն ինձ իմ ուխտը»:

Ու՛ր որ գնաք, որտեղ էլ ոտք կոխէք, ամէն տեղ միեւնոյն լացուկոծի ձայնը կը լսէք. ամէն տեղ մեծ ու փոքրերին վրէժխնդրութեան ոգին է տիրապետել. այսին, գիւղից քշել տարել են Մկօյի ոչխարները, միւս տեղ վիրաւորել են Սարգսին, մի երրորդ տեղ սպանել են Ստեփանին, անպատուել կնոջը, փախցրել ժամապահս աղջկան, եւ այլն եւ այլն...:

Այսպէս՝ շրջապատում էին մերոնց գիւղացիք եւ ամէն մէկն ուզում էր իւր դարդը պատմել. եթէ տանտէրը չլինէր, քնելու անգամ ժամանակ չէին տալ: Բայց տանտէրը հիւրերին հանգստութիւն տալու համար յաճախ ստիպուած էր լինում փակել դռները. բայց էլի հնար չէր լինում եկողներից ազատուելու: «Աղբա՛ր դուռը բա՛ց, քիչ մը նայենք», կրկնում էին բախելով դուռը եւ գալիս էին ոչ միայն տղամարդիկ, այլեւ կանայք: Այս վերջինները գուլպաներ էին ընծայ բերում, իրանց ծառայութիւնն էին առաջարկում—լուանալ, կարկատել մերոնց շորերը:

Մեր գործակալն ընտրում էր իջեւանելու համար զուտ հայկական գիւղեր, բայց եւ այս վերջիններում երբեմն պատահում էին քրդեր. այսպէս գիւղերից մէկում պահապանը քիւրդ էր. դա մի կերպ հասկանում է, որ եկողներն «Ընկերութեան» մարդիկ են: Իսկոյն մի քրդի պետի միջոցով իմացնում է հարեւան գիւղի քրդերին. այդ քրդերը պատրաստվում են յարձակումն գործելու. այս գիւղից մի հայ շտապում է այն գիւղը, ուր իջել էին մերոնք եւ հաղորդում է սպառնացող վտանգը: Ամբողջ գիւղը տակնուվրայ է լինում. բարձրանում է կանանց լաց ու աղաղակը, տղամարդիկ դուրս են թափվում տներից՝ որը դագանակ ձեռին, որը, գերանդի, միքանիսն էլ հրացան: Այստեղ ի դէպ է ասել, որ գիւղերից շատերում հայերը քրդի այնալուի դէմ, ունին միայն նահապետական դագանակն ու գերանդին, բայց ժողովուրդը տենդային կերպով ձգտում է զինուելու. ամենքն էլ ծախում են ամենաանհրաժեշտ իրեղէնները եւ դրսացից ստացած դրամը զէնքի տալիս: Պատահել են գիւղեր, ուր գիւղացիք բաւականաչափ զինուած են եղել. բայց տարաբաղդաբար այդպիսի գիւղեր բացառութիւն են կազմում. գլխաւոր արգելքը—նոր ձեւի հրացանների չափազանց թանգութիւնն է: Եւ ո՛վ ձեռք է բերում մի այդպիսի հրացան, նա իւր աչքի պէս է պահում: Սխալ են այն կասկածները, իբր թէ հրացաններ ձեռք բերելը մի վաճառականական գործ է, իբր թէ էժան գնում են եւ թանգ ծախում քրդերին. այսպիսի դէպքեր շատ չնչին բացառութիւններ են եւ այդպիսիները սաստիկ հալածվում են հայերի կողմից:

Մեր գործակալը տեսնելով գիւղին սպառնացող վտանգը, վճռում է հեռանալ: Բայց ո՞վ է թողնողը գիւղացիք երկար ժամանակ չէին համաձայնվում. վերջը համոզվում են միայն այն պայմանով, որ իրանց կը հասցնեն մերոնց մինչեւ ապահով տեղ: Գիւղից հեռանալը մի սրտաչարժ տեսարան էր: Քահանան գնում էր առաջ ընկած՝ դէպքի համեմատ սաղմոսներ կարդալով եւ շարականներ երգելով. դրան հետեւում էին գիւղի համարեա բոլոր տղամարդիկը, իզուր էր մերոնց աղաչանքը՝ վերադառնալ գիւղ: «Չէ, թող առաջ մեզ սպանեն, յետոյ քեզ, ասում էին նրանք: Երկար գնում էին այսպէս, վերջապէս մի տեղ կանգ առան՝ այստեղից՝ նրանց կարծիքով, այլեւս վտանգ չէր սպառնում: Քահանան կարդաց իւր վերջին աղօթքը. աւելացնելով. «Գնացէք, որդիքս, Տէրն ընդ ձեզ. մեծ է զօրութիւն Քրիստոսի, Նա կ'ազատի ձեզ ամէն փորձանքներից», եւ սկսեցին համբոյրներ, մաղթանքներ...:
Հեռուից լսուեց ձիաների ոտնաձայն. գիւղացիներ մի մասը դիմեց այն կողմը, որտեղից լսվում էր ոտնաձայնը: Ձիաւորները մօտեցան. դրանք երկու հոգի էին: Մէկը թռաւ ձիուց. «Որո՞նք են ադոնք, որո՞նք»: Տեսնելով մերոնց՝ նա սկսեց մէկ-մէկ համբուրել մերոնց, նորից համբուրել. «Փառք Քեզ Աստուած, որ կարողացայ տեսնել,» ասում էր նա: Եկողը հարեւան գիւղացի Ս. աղան էր:

Դեռ գնալուց առաջ երբ Ս. աղան իմացել էր մերոնց անցնելը, խնդրել էր որ վերադարձին իրան իմաց

տան այժմ իմաց էին տուել, նա եկել էր գիւղ եւ այնտեղ չտեսնելով, շտապել էր ցոյց տուած ճանապարհով։ Ես ուզում էի ձեզ տեսնելով, եղբարք, ասում էր նա համբուրուելով. մի քանի ասելիք ունիմ, հասցրէք «Ընկ.»։ Ասացէք «Ընկ.», որ այլեւս անկարող ենք տանել, թող նա գայ եւ մենք մեր կեանքը, մեր ունեցած-չունեցածը չենք խնայիլ նրան օգնելու։ Եղբարք, ասել է նա, դիմելով գիւղացիներին, դուք գիտէք որ ես տարեկան այսքան կոտ ցորեն, այսքան գարի ունիմ, այսքան խուրձ եօնջա։ Այդ բոլորը ես չեմ ծախելու, բոլորը տալիս եմ «Ընկերութեան»։ Դուրս եկան ուրիշներն էլ եւ ամեն մէկը ահագին բաժին էր հանում «Ընկերութեանը»։ Նորից համբոյրներ եւ վերջին հրաժեշտ....

Մի ուրիշ գիւղում գալիս են մեր գործակալի մօտ գիւղի իշխանները, աղ-սախկալները. սկսում են հարցուփորձ անել. սկզբում կասկածով են վերաբերվում դէպի մեր գործակալը, վախենալով մի գուցէ մատնիչի հետ գործ ունին բայց շուտով նրանց կասկածը փարատվում է եւ նրանից մէկը հանում է ծոցից մի թուղթ ու տալիս մեր գործակալին։ Այն թղթով գիւղացիները դիմում են «Ընկերութեանը» գանգատուելով իրանց դըրութիւնից. պահանջում են, որ նա շուտով գայ, խնդրում են զէնք, խոստանալով իրանց բոլորովին նրա տրամադրութեան տակ դնել եւ օգնել թէ մարդով, թէ պաշարեղէնով. եւ այլն եւ այլն։ Թղթի տակ դրուած էին բազմաթիւ կնիքներ, ստորագրութիւններ։ Իշխաններից մէկը յայտնում է, որ այդ թուղթը կազմել են իրանց մէջ բոլոր գիւղացիները եւ խնդրում են գործակալին, որ նա հասցնէ «Ընկերութեան»։ Մեր գործակալը խոստանում է նրանց ցանկութիւնը հասցնել «Ընկերութեանը», միայն հրաժարվում է թղթից, ասելով՝ թէ ինձ կարող են այսօր կամ վաղը բռնել սպանել եւ թուղթը այդպիսով կարող է ընկնել իշխանութեան ձեռքը։

Չպէտք է կարծել, որ այս խոստումները լոկ խոստումներ են՝ հարկաւոր դէպքում ժողովուրդը չի մասնակցիլ ընդհանուր գործի. ընդհակառակն—ժողովրդի մէջ ինքնապաշտպանութեան գաղափարը բաւականին զարգացած է. ահաւասիկ մի օրինակ եւս։ Մեր ընկերներին հետեւեալ դէպքը պատահեց. Նրանք պահուտուել էին մի բլրի վրայ, քարերի տակ եւ սպասում էին, որ մութն ընկնի։ Ներքեւ, դաշտումը, երեւացին երկու հայ գիւղացի, որոնցից մէկը մօտենում է բլրին, դէսուդէն նայում, յետ դառնում իւր ընկերոջ մօտ եւ երկուսն էլ անցնում գնում են հետեւեալ բլրին յետեւը։ Չանցաւ կէս ժամ, մերոնք տեսնում են, որ նոյն գիւղացիք հակառակ կողմից փորսող տալով, մօտենում են իրանց. երբ բաւականաչափ մօտեցան, պահուեցան քարերի տակ եւ մէկը պատրաստուեց հրացան արձակելու։ Մերոնք հազիւ կարողացան համոզել նրանց, որ իրանք քրդեր չեն, այլ քրդի հագուստ հագած հայեր։ Բանից դուրս եկաւ, որ դրանք փնտրելիս են եղել իրանց կորած եզը եւ կարծել են թէ մերոնք են գողցել։

Բայց ի հարկէ չպէտք է մտածել, որ դարերի ընթացքում ստրկութեան դրած կնիքը բոլորովին ջնջուել, անհետացել է։ Չենք կարող այստեղ չյիշատակել, որ մերոնց հետ մի երկու տեղ փորձել են վատթար կերպով վարուել։ Բայց այդ փորձերը բացառութիւններ են (ապացոյց այն, որ տասնեակ գիւղերից միայն երկուսումն է այդ պատահել) և իրանց նպատակին չեն հասնում հասարակութեան ընդդիմադրութեան շնորհիւ։ Այսպէս՝ մի գիւղում իշխաններից մէկն իմանալով որ գիւղում կան «Ընկ.» մարդկանցից, պատրաստվում է իմացում տալ իշխանութեանը, ասելով թէ ստորագրութիւն են տուել եւ իրանց վտանգ է սպառնում, եթէ չկատարեն խոստացածը։ Գիւղացիներն իմանալով այդ, վրդովվում են, աշխատում են համոզել եւ երբ այդ չի յաջողվում, երիտասարդներից մէկը մտնում է իշխանի տունը. «Աղա, եկել եմ քո հոգին առնեմ», ասում է նա, ուղղելով ատրճանակն աղայի սրտին։ «Օօ՛, խե՛նթ ես, որ այդքան մարդ կ՚ուզես սպանել»։ Աղան խոստանում է լռել։

Մենք բաւականանում ենք այսքանով, կարծելով որ այս փաստերը բաւականաչափ պարզում են ժողովրդի տրամադրութիւնը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Անցեալ Յուլիս ամսում Տաճկաստանցի մի երիտասարդ՝ Ղազար անունով, կամենալով վերադառնալ հայրենիք, միանում է Վան գնացող մի քարվանի հետ։ Բայց որովհետեւ նա իւր հետ ունէր մեծ քանակութիւն «Արմենիա»-ների, այդ պատճառով նա վճռում է ճանապարհ գնալ միայն գիշերները, եւ Թիւրք-պարսկական սահմանն անցնելուց յետոյ բաժանվում է քարվանից եւ շարունակում է իւր ճանապարհը մենակ։ Մի քանի ժամից յետոյ յանկարծ նա հանդիպում է տաճիկ զաֆթիէների, որոնք ձերբակալում են նրան եւ լաւ ծեծելուց ու խուզարկելուց յետոյ, գտնում են նրա մօտ յիշեալ լրագրի համարները, մի ատրճանակ եւ մի քանի նամակներ։ Դրանից յետոյ զաֆթիէները տանում են նրան Բաշկալէ յայտնի մատնիչ Յովհաննէս վարդապետ Բազանու մօտ, որ մի ժամանակ Բարթուղիմէոսի վանքի վանահայր էր։ Տեսնելով թերթերը եւ նամակները, վարդապետը յայտնում է զաֆթիէներին, որ Ղազարը յեղափոխականներից է։ Երբ Գայմագամը նրան հարց-

նում է թէ՝ որտեղից եւ ուր էր տանում այդ թերթերը, նա բոլորովին սառնասիրտ կերպով պատասխանում է, թէ ինքը Խալիլ փաշայի մարդն է եւ այդ թերթերն ու նամակներն ուղղակի տանելու էր Վան նրա մօտ, որտեղ նրան պէտք է աջակցէր հայ յեղափոխականներին բռնելու գործում: Դայմադամը հաւատում է դրան եւ անմիջապէս հեռագրում է Վան Վալի-փաշային: Այնտեղից հեռագրում են որ ուղարկեն Ղազարին զաֆթիէների հետ առանց որեւէ նեղութիւնների: Երկու ժամ ու կէս հեռագրութեան վրայ Վանից Նոր-գիւղի մօտ նրանք կանգ են առնում ճաշելու եւ հանգստանալու համար: Ճաշից յետոյ Ղազարը խնդրում է միքանի բոպէով դուրս գալ եւ օգտուելով յարմար բոպէից սկսում է փախչել: Զաֆթիէները, տեսնելով որ նա ուշացաւ, կասկածում են, ընկնում են նրա յետեւից ու սկսում են հրացան արձակել: Այդ ժամանակ նրանց առաջն է դուրս գալիս մի կինուորուած խումբ հայերի, որ կռիւ է սկսում զաֆթիէների հետ: Այդ միջոցին Ղազարը ատրճանակով սպանում է մի զաֆթիէի միւսին ծանր վէրաւորում: Դրանից յետոյ խումբը եւ Ղազարը բոլորովին անհետանում են՝ խլելով զաֆթիէներից Ղազարի բերած բոլոր թղթերը, նրանց ձիաները, հրացաններն ու ատրճանակները: Շուտով Վալին իմանում է այդ դէպքի մասին եւ 500 ձիաւոր է ուղարկում, որ գտնեն փախստականներին, բայց նրանց բոլոր ջանքերն իզուր են անցնում:

Այս դէպքը մեծ անհանգստութիւն պատճառեց Վանի կառավարութեանը:

Խմբի երեւալը բացատրվում է այսպէս, Ն. գիւղում Ղազարին երկար սպասելով սկսել են անհանգստանալ, և կարծելով, որ մի փորձանք է պատահել, խումբն ուղարկել են նրան ազատելու եւ այդպէս էլ լինում է:

ԼՈՒՐԵՐ ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Թղթակցութիւն 0.... գիւղից

Այնթապ գաւառի մէջ եղած ճնշումներ եւ հարստաբութիւնք 1891թ. Մարտ ամսէն սկսեալ.

1. Քօշք եւ Ղարղալը գիւղի մէջ տեղ երկու մարդ չարաչար տանջանքներով կ'սպանեն քրդեր:

2. Լիզ գիւղ եւ Պողակ գիւղ արտերի մէջ քրդեր երկու մարդ կը սպանեն:

3. Երկու հայ աղջիկ Քօշք գիւղէն Սիպկրցի Աշիրէթ քիւրդերն բռնի եւ չարաչար տանջանքով կը տանեն եւ կը տաճկացնեն: Այս քրդերու ցեղապետ Եուսուֆ-պէյ բռնի կերպով 15 եզ կառնու իւր եղբօր Պօլսէն վերադառնալէն վերջ:

4. Ղարասու կոչուած գիւղում մի տուն ամբողջ դերդաստանով քրդերի ահէն ստիպեալ կրօնափոխ կը-լինին: Մի տղայ եւս Դուկնուկ գիւղէն կրօնափոխ կը լինի մի անպարտ զրպարտութեան պատճառով:

5. Երկու գիւղ որ Ալաշկերտէն երկու եւ կէս ժամու չափ հեռաւորութիւն ունի եւ բնակիչները եւս հայ կաթոլիկ են, նոցա քահանան տէր Արամ կառավարութեան երկիւղէն ստիպեալ կրօնափոխութիւն յանձն առաւ իւր դերդաստանօք հանդերձ՝ երկու մատաղահաս տղայով եւ երկու աղջկով, իսկ մեծ տղան փախաւ. աղջիկն այժմ Թուրք զօրապետներու տալ յանձն կ'առնու եւ ինքն եւս Ալաշկերտի մէջ կը գտնուի՝ ունենալով մեծ պատիւ տաճիկ մոլեռանդ ժողովրդէն:

6. Տարապ քիւրդ գիւղի մէջ Արապ-աղայ արենաբրու քիւրդը մի Բիթլիսեցի տղայ կրօնափոխելով իւր քովը կը պահէ:

7. Խոշեան գիւղ քրդերի ահէն եւ երկիւղէն ստիպեալ կրօնափոխութեան խօսք տուած է, չկարողանալով տանել այն անտանելի չարչարանքներն ու տառապանքները, որ նոքա կուտան խեղճերին:

8. Ցամատ գիւղ Մայիսի 25-ին գիշեր ատեն 50-ի չափ քիւրդ կուգան եւ կը պաշարեն. մինչեւ արշալոյս պնդակ կը տեղայ գիւղի վրայ, թէեւ գիւղացիք կը գիմադրեն, բայց չունի ինքզինքնին պաշտպանելու զէնքեր, ցորեկ եւս յիշեալ քրդեր կուգան եւ կ'առաջարկեն գիւղացոց՝ կամ 100 լիրա պիտի տաք կամ ասկից վերջ ապահով չպիտի ապրիք:

9. Ալաշկերտի մէջ մի տուն Մայիսի 22-ին կը խուզարկեն ոստիկաններ եւ զինուորներ. խիստ նեղութիւն կուտան կանանց, կը ծեծեն ու կը բռնաբարեն, իսկ մարդկանց բանտարկեր են, թէեւ ոչինչ չեն գտեր, բացի մի աղդային պատմութիւնից ու Եղիշէից զատ: Օրըստ օրէ կը սաստկանայ կառավարութեան ու քրդերու հարստահարութիւն, նամանաւանդ վերջիններն, որոնց ցեղապետք ստացան Սուլթանէն 3րդ եւ 4րդ կարգի պատուանշաններ եւ վերադարձան իրենց տեղերը:

10. Ախլաթից գրում են, տեղւոյս դայմադամը Իբրահիմ բէյ անուամբ մէկը, որ Բաղիշոյ Վալլի ցեղէն է քանի մը հատ ոստիկանք խրկելով անմիջապէս ժամանակէ դուրս տուրք կը պահանջէ՝ եղներ, ոչխարք, կով կիսագին ծախել տալով: Իսկ որք չեն կարող, դայմադամ ոստիկաններուն կը հրամայէ տան մէջ փակել եւ մուխ տալ:

Բաղէշից մեզ գրում են, որ երեք Բաղիշեցի հայ վաճառականներ Վանից Բաղէշ գնալու ժամանակ քրդերը յարձակում են դրանց վրայ՝ կողոպտելու նպատակով, բայց չկարողանալով բոլորովին կողոպտել, երեքեքն էլ սպանում են եւ նրանց բոլոր ապրանքը փոխադրում

Թղթակցութիւն Ալաշկերտից

Թէժմր կոչուած քիւրդ, երեւելի աւազակապետ՝ աշնանէ սկսեալ ցարդ ինկած հայ գիւղեր, իւր տասն ընկերօքն հանդերձ մի առ մի սատակ կը ժողվէ, շատ խըստութիւն եւ բռնութիւն բանեցնելով խեղճ ժողովրդեան վրայ եւ այսպիսով իւրաքանչիւր գիւղին՝ 10, 20, 30 արծաթ առնելով, կը թողնի կ'երթայ մի այլ տեղ: Այդ աւազակապետ քանի մի անգամ մարդ ուղարկեց մեր գիւղը՝ Եօնճալու Տ. Գ. Քին. թէ՝ կամ 50 հատ լիրա վճարեցէք եւ կամ քո կեանքդ: Իսկ գալով ամառուայ կրած զեղծումներուն թէ անասնոց եւ թէ արմտեաց նկատմամբ յոյժ անթիւելի է: Մեր գիւղի մէջ միայն 50—60—ի չափ անասուններ գողցան, 150—ի չափ սայլից առաւել արմտի այրեցին. ամեն գիւղի առհասարակ միեւնոյն չափով եւ ոչ նուազ վնասներ հասուցին: Ղազլի գիւղ մի երիտասարդ սպանեցին, Խար գիւղ մի մարդու դաշոյնի 25 հարուածով վիրաւորեցին, եւ այլն եւ այլն, մեծամեծ վնասներ ու մարդասպանութիւններ կատարելով: Իսկ կառավարութեան բողոք տրուած ժամանակին ամենեւին ուշկնդրութիւն չի լինիր եւ ի նկատի չեն առնիր հայի վնասն ու տառապանքը:

Իսկ Վաղարշակերտի տեղակալ (գայմի մէգամ) Ահմէտ-աղէյ կոչուած անձը իւր (Վաղարշակերտի) ժողովուրդն աշնանէ սկսեալ ցարդ յայտնապէս կողոպտած է՝ իւրաքանչիւր անձէն 20, 30, 40 լիրա բռնի կաշառք առնելով եւ 20ի չափ մարդիկ եւս բանտարկելով. վեց ամիսէ ի վեր է որք տակաւին բանտը կը կենան, անպատմելի ու հարստահարութիւնների ենթարկուելով: Կառավարութեան կողմանէ բոլորովին արգելուած է բանտարկեալներին հայի երես տեսնելը:

Բրկի Յարութիւն կոչուած անձի (որ այժմ Ռուսաստան կը գտնուի) կինը կառավարութեան կողմանէ կը կանչուի. կը հարցնեն թէ՝ քո այր Յարութիւնը ո՞ւր է, քեզանից այժմ կ'ուզենք: Նա կը պատասխանէ՝ ես ի՞նչ գիտեմ ուր է գնացեր, նա այր, ես կին, կարող եմ իշխել նրան: Այս պատճառով երկու օր կը բանտարկեն:

Վերջապէս հարստահարութիւն, բանտարկութիւն, կեղծումն եւ այլն հալածանք չի մնար, որ չկատարուի թէ քրդերի եւ թէ կառավարութեան կողմէ մեր խեղճ հայ ժողովրդեան վրայ:

Երանոս կոչուած գիւղէն մի պատանի բռնի կրօնափոխ ըրին Կառավարութեան միջոցով՝ Էրզրումի Վալի փաշայի ներկայութեամբ, որ Գարաքիլիսէ գիւղաքաղաքի մէջ կը գտնուէր նոյն միջոցին:

Տաճկա-Հայաստանի մի ուրիշ անկիւնից գրում են:

Եղբարք, ձեզ խօսքով կը գրեմ ձեզ, դուք իմացէք:

—Որքան որ բանտարկեալ կայ թէ Կարին, թէ տեղս եւ թէ Կոգովիտ, բոլորն ալ Կոգովիտ տարուած են: Վաղարշակերտի մնացած ժողովուրդը թէ գիւղեր եւ թէ տեղս իրենց անձին տէր չեն. կ'ըլլայ որ քանի մը աւուր յետ ամենը բանտարկուին, ամեն օր վայնասուն, տներու մէջ խուզարկութիւն կընեն խարազանի հարուածներով, խեղճ կնանիքներ կը ծեծուին՝ հրացաններ կըպահէք ասելով: Ոստիկաններ գիւղեր կ'երթան, իզուր տեղ կը չարչարեն եւ զրպարտութիւններ կ'անեն, թէ դուք ապստամբ էք. կը խռնեն, խեղճերէն բռնի փարաներ կ'առնեն, տուրք հաւաքելու համար մարդագլուխ երկու-երկու հաւ կ'առնեն կ'ուտեն:

Եղբարք, որտեղ որ կըբողոքենք, մեր բողոքը մեզի կը մնայ առանց լսելի լինելու: Եթէ երկինք բողոքենք, ան ալ լուռ կը մնայ, եթէ երկրին բողոքենք, մեր բողոքը Եփրատայ խորշերուն մէջ կ'իյնայ եւ ալիքներէ հետ մէկ տեղ կը կորսուի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այն օրուանից, երբ գրուել է մեր նախընթաց համարի տեսութիւնը, Եւրոպայի արտաքին քաղաքականութեան մէջ եղան նշանաւոր դէպքեր: Եռապետեան դաշնակցութիւնը վերանորոգուեց էլի 6 տարով: Ռուսաստանի եւ Ֆրանսայի յարաբերութիւններն աւելի սերտ բնաւորութիւն ստացան եւ հաստատուեցան Կրօնշտադի օրերից յետոյ:

Անգլիան, թէեւ ըստ ամենայնի ուզում է չէզոք դիրք բռնել, բայց էլի իւր բոլոր հակումներով եւ նոյն իսկ շահերով շատ մօտ է եռապետեան դաշնակցութեան: Օսմանեան պետութեան բռնելիք դիրքը մինչեւ այժմ դեռ անորոշ է և առիթ է տալիս զանազան ենթադրութիւնների: Նոյն իսկ վերջերումս պատահած Թիւրքիայի նախարարութեան փոփոխութեան պատճառների մասին զանազան կարծիքներ են յայտնում: Շատերը՝ մեծ մասամբ ֆրանսիական եւ ռուս լրագրները բացատրում են այդ այն յաղթութեամբ, որ ունեցաւ ռուսաց դիպլօմատիան Դարդանելեան ջրանցքի հարցում, եւ այսպիսով նախարարութեան փոփոխելը վերագրում են այն հանգամանքին, որ ֆրանս-ռուսական դաշնակցութիւնից յետոյ այդ երկու պետութիւնների ազդեցութիւնը Սուլթանի վրայ սկսեց զօրեղանալ, այն ինչ ընդհակառակը Անգլիայի եւ եռապետեան դաշնակցութեան նշանակութիւնը եւ ազդեցութիւնը սկսեց ընկնել: Դրանք ասում են որ Ջեվադ-փաշան, որ փոխարինել է Քեամիլ-փաշային, յայտնի է իբրեւ ռուսաց քաղաքական ազդեցութեան ջերմ կողմնակից: Գերմանական եւ անգլիական այդ փոփոխութիւնը ներքին պատ-

ճառներով։ Նրանց խօսքերով՝ Սուլթանը մասամբ սատիկ բարկացած լինելով մեծ վէզիրի վրայ որ նա չի կարողանում վերջ դնել յաճախ կրկնուող աւազակային խմբերի յարձակումներին, միւս կողմից էլ լսելով մի ինչ-որ դաւադրութեան մասին իւր դէմ, որի մէջ մասնակցում էր իբր թէ եւ Քեամիլ-փաշան, վճռում է հեռացնել նրան եւ մինչեւ անգամ պատասխանատուութեան ենթարկել։ Բացի դրանից Սուլթանը շատ անբաւական էր որ Եմենի ապստամբութիւնը մինչեւ հիմա դեռ չկարողացաւ խաղաղեցնել Քեամիլ-փաշան։ Թէ այդ պատճառաբանութիւններից որն է աւելի ճիշտը, դժուար է որոշել, բայց մի հանգամանք, որ կարող է ցոյց տալ, թէ այս դէպքերում քաղաքականութիւնը շատ քիչ դեր է կատարել, այդ այն է, որ արտաքին գործոց նախարարը միակն է, որ մնացել է անփոփոխ նոր նախարարութեան մէջ,—այն է Սայիդ-փաշան։

Այդ միեւնոյն ժամանակ սպառնալի լուրեր են շրջունակում դալ Բ. Դռանը թէ Կրետէ կղզուց եւթէ մանաւանդ Եմենից։ Վերջինի ապստամբութիւնը շատ ծանրը հարուած տուեց Սուլթանի տիրապետութեանը Փոքր-Ասիայում։ Հայաստանի դրութեան մասին Սուլթանը վերջերումս բոլորովին հանգստացած է երեւում՝ ոչ մի շարժման ձայն չլսելով. ուստի բարենորոգումների գործը նա տրամատիր է աւելի եւս յետաձգել։

Եւրոպական դիպլոմատիան դատապարտելի սառնասրտութեամբ նոյնպէս մոռացութեան է տուել Հայոց հարցը, զբաղուած լինելով զանազան մանրակրկիտ շահասիրական խնդիրներով։ Մի անգամ գրուեց լրագրների մէջ, թէ մտադրութիւն կայ հրաւիրել միջազգային կոնֆերենցիա մի քանի նոր յառաջ եկած հարցեր (նրանց թւում եւ Հայոց հարցը) կարգաւորելու համար։ Բայց այդ միտքն այլեւս չկրկնուեց, եւ դեռ երկար ժամանակ կը տեւի, եթէ մենք՝ հայերս սպասենք որ Եւրոպան ինքը իւր ինիցիատիվով զբաղուի հայկական հարցով։ Մենք արդէն շատ անգամ յայտնել ենք այն միտքը, որ Եւրոպան միայն այն ժամանակ լուրջ կերպով կը զբաղուի մեր հարցով, երբ տաճկա-հայ ժողովուրդը ոտքի ելնելով զօրեղ բողոք կը ներկայացնի այդ Եւրոպային իւր դոյութեան պայմանների մասին, եւ զնդակների ու սրերի շշնջոցի տակ կը դնի Եւրոպայի առաջ իւր պահանջները։ Թող այդ միտքը լաւ ըմբռնեն մեր հարուստները եւ կեղծ-ինտելլիգենտները, որոնք երանց կոպէկները խնայելով հանդերձ միեւնոյն ժամանակ անտարբերութեամբ քարոզում են, թէ պէտք է ոչինչ չանել եւ դեռ սպասել ու յուսալ դիպլոմատիայի բարեպատեհ փոփոխութիւնների վրայ։ Իսկ եթէ այդ բարեպատեհ փոփոխութիւնները մեզ բոլորովին անպատրաստ գտնեն, ինչ կ'անէք այն ժամանակ։

Եւրոպական մամուլը, որ նոյնպէս կարօտ է երբեմնական ալմկալի դէպքերի, որ զբաղուի որեւէ հարցով, ի հարկէ հիմա աւելի քիչ է խօսում մեր հարցի մասին։ Բայց եւ այնպէս —համակրական յօդուածներ յօդուած մեր դատի շարունակում են երեւնալ եւրոպական թերթերում։

Այստեղ կը յիշենք միայն դրանցից մի քանիսի մասին։

Փարիզի «Օբսերվատեօր Ֆրանսէզ» թերթի Պօլսի թղթակիցն առաջ բերելով Թիւրքաց ճնշումների բազմաթիւ փաստեր, վերջացնում է այսպէս. «Թէեւ Սուլթանը յոյս դնելով գերմանացոց կայսրի վրայ մերժում է ի նկատի առնել մարդկային օրէնքներն ու քաղաքակրթութեան շահերը, այնուամենայնիւ անօգուտ չի լինիլ առաջ բերել այն հաստատ փաստերը՝ մանաւանդ իբրեւ հակապատկեր այն փքուն եւ անհիմն ներբողների, որ յայտնի Ֆրանսիական թերթեր գրում են Սուլթան Աբդիւլ-Համիդի «ազատամիտ» եւ «բարեխնամ» կառավարութեան մասին»։ Մի ուրիշ շատ յայտնի Ֆրանսիական թերթ նոյնպէս մի քանի սարսափելի փաստեր բերելուց յետոյ ասում է հետեւեալը. «Եթէ կայ համերաշխութիւն քաղաքակրթուած ազգերի մէջ, ապա ուրեմն պէտք է ասուի որ Հայ ազգը, որի քաղաքակրթութիւնն անցնում է նոյն իսկ Յոյն-հռոմէական ժամանակներից, անպաշտպան ենթարկուած է բարբարոսների տիրապետութեանը։ Զարմանալի է որ արշաւանքներ են անում Աֆրիկայի ստրկութեան դէմ եւ անտարբեր տանում են սարսափելիքներ Եւրոպայի աչքի առաջ»։ Մի անգլիացի օրիորդ Բիչոպ անունով, որ երկար ճանապարհորդել էր Տաճկա-Հայաստանում, մի դասախօսութիւն է կարդացել Լօնդոնում, որի վրայ մեծ ուշադրութիւն են դարձրել բոլոր լրագրները։ Նա յայտնել է բացարձակապէս, որ «ոչ թէ միայն գոյքի, այլ եւ կեանքի լիակատար անապահովութիւն է տիրում քրիստոնէական նահանգներում»։ Օրիորդը տեսակցութիւն է ունեցել Պօլսում մեծ վէզիրի հետ եւ դուրս է բերել այն եզրակացութիւնը, որ նա մինչեւ անգամ տեղեակ չէր քիւրդերի այն չարագործութիւններին, որոնց մասին ինքը օրիորդը լսել էր՝ նոյն իսկ տեսել իւր ճանապարհորդութեան ժամանակ։

Ֆրանսիական մի ուրիշ թերթ հայկական հարցին մի ահագին առաջնորդող յօդուած է նուիրում, որ գրուած է շատ համակրական կերպով, եւ եթէ տեղը ներէր մենք յառաջ կը բերէինք այդ յօդուածն ամբողջովին, բայց առայժմ ստիպուած ենք այդ յետաձգել։

Վիէննա. Դաշնակցութեան աղատ տպարան։